ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<< ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Սիսիան քաղաքի <<Հիդրոշինարարների այգի>> հասցեում գտնվող 0.19հա հողամասը տարիների ընթացքում բաժանվել է առանձին միավորների և հատկացվել հասարակական կառուցապատման նպատակով: Արդյունքում գլխավոր հատակագծում առկա զբոսայգի համարվող տարածքի 0.6709հա հողամասը փաստացի կառուցապատված է հասարակական շենք-շինություններով և ըստ էության չի ծառայում և չէր կարող ծառայել որպես զբոսայգի: Կարևորելով քաղաքի կենտրոնական հատվածում քաղաքաշինական տեսքի ապահովումը և համայնքի հողօգտագործման կարգավորումը՝ նպատակահարմար է գտնվել արդեն իսկ այգու կառուցապատված հատվածը ընդհանուր օգտագործման հողերից տեղափոխելու հասարակական կառուցապատման հողերի շարքը:

Ելնելով վերոգրյալից՝ կազմվել է հողաշինարարական գործ, որն էլ ներկայացվել է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի քննարկմանը, որից հետո կազմված հողաշինարարական գործի վերաբերյալ տրվել է դրական կարծիք:

Հիդրոշինարարների այգի թիվ 3/10-3 հասցեում գտնվող հողամասի գործառնական նշանակությունը փոփոխվել է բնակավայրերի հասարակական կառուցապատման և վերագրանցվել է ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից: Համաձայն 2004 թվականի դեկտեմբերի 13-ին կնքված հողամասի վարձակալության պայմանագրի, քաղաքացի Լյուդմիլա Գրիգորյանն ունի հողամասի գնման նախապատվության իրավունք, ուստի անհրաժեշտ է հողամասն ու նրա վրա կառուցված շինությունը ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացուն:

Հողամասի համար ուղղակի վաճառքի գին սահմանել է հողամասի կադաստրային արժեքը՝ 232x528=122496դրամ, իսկ շինությունը գնահատվել է 5677504 դրամ շուկայական արժեքով, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ շինությունը կառուցվել է քաղաքացու սեփական միջոցների հաշվին, ուստի շինության ուղղակի վաճառքի արժեքը սահմանվել՝ 0 դրամ:

Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և տնտեսության ոլորտը համակարգող բաժնի պետ՝ Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

19.08.2019թ

ՏԵՂԵԿԱՆՔ

<< ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ >> ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Սիսիանի համայնքի ավագանու որոշման նախագծի հաստատումից հետո համայնքային բյուջեի ծախսային մասում փոփոխություն չի կատարվի, իսկ եկամտային մասում կկատարվի ավելացում:

Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և տնտեսության ոլորտը համակարգող բաժնի պետ՝ Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

19.08.2019թ.